ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ ՉԻ ՆՎԱԶԵԼ



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մայրության հիմնադրամի» նախագահ ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ հետ զրույցիս հենքը երկամսյա հիվանդությունը մոռացության տալու անճիգ ճիգերն էին. միաժամանակ՝ կանանց հիմնախարցերին նվիրված եռօրյա գիտաժողովի բուռն տպավորությունները։ Բոլոր այդ պահերին ամենաներկան Արցախն էր՝ լույսի ու հավատի անմարույց միջնաբերդը, որի մասին խոսքը թվայալ է հպանցիկ. խնկությամբ միս ու արյունով ամրագրված է

–Արցախյան ազատամարտը հայոց պատմության այն երանելի դրվագներից է, որտեղ հաղթանակները միայն «բարոյական» ածականով չեն բնութագրվում, այլ ուղղակի իմաստով ազատագրվել են Հայրենիքի պղծված եզերքի մի քանի ծվենը։ Չշտապենք խոսել վերջնական հաղթանակի մասին կամ բաժանել դափնիները։ Բայցեւայնպես այս նոր հաղթանակի ո՞ր մասն է արցախցի կանանցը։

–Նրանք ապրում են այն նույն հոգսերով, որոնք ծառացած են իրենց ամուսինների եւ զավակների առջեւ։ Հայ կինն ամենուրեք է ռազմաճակատում, թիկունքում, հոսպիտալում ուր իր կարիքը կա։ Նա ոչ միայն խնամում է վիրավորներին, այլեւ իր արյունն է տալիս նրանց։ 18 տարեկանից բարձր բոլոր կանայք ու աղջիկները տղամարդկանց հավասար պայքարում են մեր հանրապետության անկախությունը պահպանելու համար։

–Տիկին Հասմիկ, ինձ միշտ զարմացնում է, թե ինչպե՞ս է ձեզ՝ արցախցիներիդ, հաջողվում տարհամոզել ամենաուղղափառ հյուրերին անգամ։ Մեծ մասը գալիս է չարչրկված հասկացությունները դրոշակելով եւ հեռանում ձեր հող ու ջրին մարդկանց սիրահարված։ Զինվոր լինելուց զատ դուք նաեւ հմուտ դիվանագե՞տ եք, թե՞ այլ գաղտնիք կա։

–Գլխավոր գաղտնիքն այն է, որ մեր պայքարն արդարացի է, եւ դրանում համոզվելը դժվար չէ։ Բացի դրանից՝ գոյություն ունեն զուտ մարդկային հատկանիշներ, որոնք հատուկ են արցախցիների մեծագույն մասին՝ հպարտություն, արիություն, կամք, բարություն, մարդասիրություն։ Այդ բոլորն արժանանում են դիմացինի համակրանքին, նվաճում նրա հարգանքը։ Եվ ես կցանկանայի, որ դա գիտակցեին նաեւ մեր հարեւանները՝ ադրբեջանցիները, որ նրանք էլ վարակվեին բարությամբ ու ներողամտությամբ։ Չէ՞ որ, վերջիվերջո, երկուսս էլ պետք է ապավինենք բարիդրացիությանը.

–Առանց միմյանց ընդառաջ գնալու, առանց նախնական շփումների այդպիսի արդյունքի հնարավոր չէ հասնել։ Այստեղ է, որ կանայք կարող են խախտել թշնամության կարծրացած սահմանները եւ խաղաղ բանակցությունների համար նպաստավոր մթնոլորտ ստեղծել։ Ինչի՞ են հանգեցրել առաջին փորձերը։

–Դժբախտաբար, ադրբեջանցի կանայք դեռ չեն շտապում արձագանքել մեր կոչերին։ Պատճառը, ըստ երեւույթին, այդ հանրապետության ներքին բարդ իրավիճակն է։ Նույնիսկ առողջ մտածողություն ունեցողների համար վտանգավոր է ազատորեն սեփական համոզմունքների մասին խոսելը։ Ներքաղաքական կյանքը այնտեղ խիստ սրված է, հակասությունները միայն իշխանությունների եւ ընդդիմության միջեւ չեն, միմյանց դեմ սրեր են ճոճում բազմաթիվ խմբավորումներ ու կուսակցություններ։ Այդ պայմաններում փոխշփման հնարավորությունները շատ փոքր են։ Ոչ, առայժմ գործնական արդյունքների հույս չկա։ Որոշ ժամանակ պետք է համբերենք, մինչեւ Ադրբեջանում հաղթանակեն ժողովրդավարական ուժերը։ Միայն այդ ժամանակ կկարողանանք կապեր հաստատել կանանց կազմակերպությունների հետ եւ հիմք ստեղծել խաղաղ բանակցությունների համար։

–Չճանաչված երկրների հետ ԼՂՀ-ը քաղաքական եւ տնտեսական փոխառնչություններ ունի։ Ի՞նչ հույսեր է ներշնչում այդ համագործակցությունը։

–Արցախի «Մայրության հիմնադրամը» դաշնակցում է միջազգային բազմաթիվ կազմակերպությունների հետ։ Չճանաչված երկրների եւ ԱՊՀ-ի անդամների հետ մեր շփումները առավել արդյունավետ եւ հեռանկարային են։ Քանի որ նորանկախ պետությունները հիմնականում հռչակվել են ազգային հակամարտության գոտիներում, կարեւորվում է Զինվորների մայրերի կոմիտեների հետ կատարվող աշխատանքը, որը միտված է միմիայն խաղաղության հաստատմանը։ Այդ հարցում մեր ձգտումներն ու գործելակերպը միանգամայն նույնն են։

–Ասում են՝ պատերազմ տեսած սերունդը չի կարող առողջ համարվել։ Արցախյան պարտադրված պատերազմը որբացրել է բազմաթիվ երեխաների. շատերը հոգեկան խեղումներ են կրել։ Մի սերունդ էլ ծնվել է հենց ռումբերի պայթյունների տակ. ապաստարաններում ու գաղթի սարսափելի ճամփաներին։ Այնուամենայնիվ...

– ...Այնուամենայնիվ մանկածնությունը գրեթե նախապատերազմականի մակարդակին է. տարեկան 2000 երեխա է աշխարհ գալիս։

–Եվ բազմազավակության օրինակը հանրապետության ղեկավարնե՞րն են տալիս։

–Այո։ Այդ միջոցը Արցախի գոյատեւման բանալին է։ Արդեն ժամանակն է, որ մենք լրջորեն մտածենք մեր բալիկների կյանքի բարօրության մասին, նրանց համար առողջ միջավայր ստեղծենք, որին առանց մշտական խաղաղության անհնար է հասնել։ Խաղաղության հարցը մեզ համար հիմա ամենագլխավորն է, որովհետեւ միայն խաղաղ կյանքն է լիարժեք սերունդ դաստիարակելու հուսալի միջոցը։ Մեր հիմնադրամն ամեն ինչով օգնում է նորածին երեխա ունեցող մայրերին, թեթեւացնում է նրանց հոգսը։ Եվ ինչն է զարմանալին, որ հայ մայրերը ավելի շատ տղաներ են ունենում։

–Պատերազմի օրենքներից չէ՞։

–Ասում են։ Որպեսզի ծնվածները փոխարինեն իրենց զոհված հայրերին ու եղբայրներին։ Նրանք մեր հույսն են, եւ պիտի ջանանք, որ այս սերունդը այլեւս պատերազմ չտեսնի։

–Հայաստանի եւ Արցախի կանանց միջեւ հոգեկան բազում կապեր կան։ Առիթի դեպքում միմյանց համարում ենք միակ ընդօրինակելին եւ դա անում ենք անկեղծորեն հավատալով մեր զգացմունքներին։ Եթե հայաստանցիներիս մասին ասվածում ինչ-ինչ վերապահումներ կան, Արցախի մեր քույրերի հասցեին դա ուղղակի բացառվում է։ Նրանք էլ, սակայն, չեն կարող զերծ մնալ այն արատներից, որոնք Հայաստանում ծլարձակում, իսկ որոշ դեպքերում փթթում-բարգավաճում են։ Ամենապարզապես վելին ես համարում եմ ամեն ինչի հանդեպ անտարբեր, սրբություններից ու կուռքերից ներքեւ ապրող կանայի մի որոշակի խավի գոյությունը։ Նրանց ազգուրացությունը իջել է մինչեւ զավակների դասալքությունը քողարկողի աստիճանի։ Արցախում նման երեւույթներ նկատվո՞ւմ են։

–Անչափ ցավոտ խնդիր է ինձ համար։ Ամուսինս եւ երեք որդիներս ռազմաճակատում են, ուրեմն պետք է հասկանաք, թե ձեր նշած բացասական երեւույթները ինչպես կարող են հուզել ինձ եւ ինձ նման հարյուրավոր արցախցի մայրերի։ Իմ ընտանիքը միշտ ապրել է Ղարաբաղում, երբեք երկար ժամանակով չենք բացակայել, ուստի կարծում եմ բարոյական իրավունք ունեմ ասելու, պահանջելու, թե ինչո՞ւ են այդ մայրերը իրենց որդիներին ազատում բանակից։ Ի դեպ, Արցախում նման խնդիր չկա, խոսքս հայաստանցի մայրերի մասին է։ Ես չեմ հարգում նրանց որդեսիրությունը։ Դա կեղծ սեր է, վտանգավոր դաստիարակություն։ Տնտեսական ու ռազմական ցանկացած պայմաններում մենք պետք է մնանք մեր հայրենիքում, պաշտպանենք ու զարգացնենք այն, որպեսզի նրա ճակատագիրը հանգիստ խղճով հանձնենք մեր որդիներին ու թոռներին։ Մենք փոքր ժողովուրդ ենք, յուրաքանչյուր անհատի պահվածքն ու մտածողությունը վճռական դեր են կատարում, հետեւաբար յուրաքանչյուրիս խոսքն ու քայլը պետք է խստորեն հաշվարկված լինեն։ Ոչ ոք մեր երկիրը, մեզ չի պաշտպանելու, դրանք անհեռանկար հույսեր են։

–Մարդու հույսն արթուն է, քանի կենդանի է սերունդների հերթափոխության հնարավորությունը։ Արցախում այդպես էլ կա։ Երիտասարդ տղաների երեւան գալը՝ եւս մեկ ապացույց։

Ձեզ եւ Արցախի բոլոր կանանց հենց այդ երջանկությունն եմ մաղթում։

ՀՐԱՉՈՒՀԻ ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ